

ԿՅԱՆՔ ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Բերքա ֆոն Չուտներ

Հրատարակիչ՝

@ 2005 Ավստրիայի հասարակական և տնտեսական թանգարան,
Վիեննա, <http://www.wirtschaftsmuseum.at>

Պատրաստվել է Ավստրիայի արտաքին գործերի նախարարության
հանձնարարությամբ, Վիեննա, <http://www.aussenministerium.at>

Բովանդակային հայեցակարգը՝ Գեորգ Համանի

Հրատարակիչ՝ Պաուլ-Գերին տպարան, Վոլկերտորֆ

ISBN: 3-902353-28-7

Բերքա ֆոն Չուտներին

Նորելյան մրցանակի շնորհման 100-ամյակը

«Վայր դրեք զենքը». Բերթա ֆոն Չուտների այս հռչակավոր վեպի վերնագիրը նշանավոր այս կնոջ համար միաժամանակ ծրագիր էր և կյանքի նպատակ: Բերթա ֆոն Չուտներին խաղաղության նորեկյան մրցանակի շնորհման հարյուրամյակը հրաշալի առիթ է նրա վաստակի մասին հիշելու և այդ առթիվ խորհրդածելու:

Բերթա ֆոն Չուտները ոչ միայն Նորեկյան մրցանակակիր առաջին կինն էր, այլև առաջինն էր, որ ոգեշնչեց իր բարեկամ և բարերար Ալֆրեդ Նորելին հիմնելու Խաղաղության Նորեկյան մրցանակը:

Որպես գրող և ատենախոս՝ Բերթա ֆոն Չուտները աշխարհաժամալ խաղաղության շարժման առաջատար դեմքն էր: Հակադրվելով իր ժամանակի մարտահրավերներին՝ նա անխոնջ պայքար էր մղում ընդդեմ ազգային մոլեռանդության, ռազմամոլ կարգախոսների, ատելություն սերմանող քարոզչության և հակասեմիտիզմի: Նա հասկանում էր այդ գաղափարախոսությունների կործանարար ուժը և մարգարեացավ. «Հաջորդ պատերազմը մինչ այժմ եղածներից ավելի սարսափելի է լինելու»:

Բերթա ֆոն Չուտներին չվիճակվեց վերապրելու 20-րդ դարի կործանարար աշխարհամարտերը: Մենք, որ փորձառությունն ունենք այդ սարսափելի պատերազմների, պարտավոր ենք հիշել ֆոն Չուտների վաստակը և նրանով առաջնորդվել:

Ավստրիական արտաքին քաղաքականությունը առաջնորդվում է Բերթա ֆոն Չուտների ոգով՝ հանուն աշխարհում խաղաղության և մարդու իրավունքների հաստատման: Քանի որ տևական խաղաղությունը և անվտանգությունը հնարավոր են միայն այնտեղ, ուր երաշխավորված են մարդու իրավունքները:

Դ-ր. Ուրսուլա Պլասնիկ
Ավստրիայի Հանրապետության
Արտաքին Գործերի Նախարար

Բերթա ֆոն Չուտներ (1843-1914)
Կենսագրություն

9-ը հունիսի 1843 - Բերթա Սոֆիա Ֆելիսիտա Կինսկին՝ դքսուհի Խինիցի և Տետաուի, ծնվել է Պրագայի Կինսկի պալատում, հին քաղաքի օղակում: Բերթայի մանկությունն անցել է իր մոր՝ Սոֆիայի հետ, Բրյուննում:

1856-1873 – Հաստատվում են բնակության Վիեննայում, այնուհետև՝ Վիեննային հարող Քլոստերնոյբուրգում, ապա Վիսբադեն, Փարիզ, Բադեն-Բադեն, Վենետիկ, Բադ Հոմբուրգ

1864-ի ամառ – Բադ Հոմբուրգում ծանոթանում է Սենգրեյիայի իշխանուհի Եկատերինա Դադիանիի հետ

1873-1875 - Բարոն Կարլ ֆոն Չուտների չորս դուստրերի դաստիարակչուհի՝ Վիեննա և Հարմանսդորֆ/Ներքին Ավստրիա: Գաղտնի կապ վերջինիս որդու՝ Արթուրի հետ

1875 աշուն-1876 ամառ - Ալֆրեդ Նոբելի քարտուղարուհին, Փարիզ

12-ը հունիսի 1876 - Գաղտնի ամուսնություն Արթուր ֆոն Չուտների հետ՝ Վիեննա-Գումպենդորֆի Սբ. Էգիդ եկեղեցում

1876-ի ամառ-1885-ի գարուն – Ֆոն Չուտներ ամուսինները բնակություն են հաստատում Վրաստանում. Թիֆլիս, Քութաիս, Չուգրիդի

1885 մայիս – Վերադարձ Ավստրիա

1885 հոկտեմբեր – Մասնակցություն գրողների համաժողովին, Բեռլին

1886/1887 ձմեռ - Բնակություն Փարիզում: Առաջին շփումները խաղաղության շարժման հետ:

1889 – Լույս է տեսնում «Վայր դրեք զենքը» վեպը

1890/1891 ձմեռ - Բնակություն Վենետիկում: Շփումներ «Միջխորհրդարանական համաժողովների» ներկայացուցիչների հետ

1891 - Առաջին մեծ հրապարակային ելույթը Հռոմի 3-րդ Համաշխարհային խաղաղության կոնգրեսում, հիմնում է «Ավստրիական խաղաղության ընկերությունը»

1892 – Հիմնում է «Հակասեմիտիզմից պաշտպանության միությունը», ուղևորություններ Բեռլին, Բեռն և Ցյուրիխ

10-ը դեկտեմբերի 1896 - Ալֆրեդ Նոբելի մահը

1899 – Հաագայի առաջին խաղաղության համաժողովը

10-ը դեկտեմբերի 1902 - Արթուր ֆոն Չուտների մահը

1903 – «Խաղաղության միջազգային ինստիտուտի» հիմնադրումը, Մոնակո

1904 - Ամերիկյան առաջին ուղևորությունը, մասնակցություն Բոսթոնի Համաշխարհային խաղաղության կոնգրեսին: Ընդունելություն նախագահ Թեոդոր Ռուզվելտի կողմից, Վաշինգթոն

1905-ի դեկտեմբեր - Չուտներին շնորհվում է խաղաղության նոբելյան մրցանակը

1906-ի գարուն – Խաղաղության նոբելյան մրցանակի ընդունումը Քրիստիանիայում, դասախոսությունների շարք Սկանդինավիայում

1907 – Հաագայի երկրորդ խաղաղության համաժողովը

1912 - Ամերիկյան երկրորդ ուղևորությունը

21-ը հունիսի 1914 - Բերթա ֆոն Չուտների մահը Վիեննայում, նրա դին, իր իսկ ցանկության համաձայն, հրկիզվում է: Աճյունասափորը ամփոփված է Գոթայում:

Մանկությունը և պատանեկությունը

Պրագա, լուսանկար՝ շուրջ 1900 թ., Չուտների արխիվից:

Երիտասարդ Բերթան իր մոր կողքին
ապրում է ճոխ և հարուստ հասարակական կյանքով:

Վենետիկ 1864 Հոմբուրգ 1866

Չորս Կինսկի եղբայրները՝ ավստրիական բանակի բարձրաստիճան սպաներ:
Բերթայի հայր Ֆրանցը (ձախից երկրորդը) մահանում է 75 տարեկան հասակում՝
նախքան իր դստեր ծնվելը:

Մեծ շահ ստանալու հույսով՝ Բերթայի մայրը
խաղատներում տանուլ է տալիս դստեր ողջ ունեցվածքը:

Բերթա Սոֆիա Ֆելիսիտա Կինսկին՝ դքսուհի
Խինիցի և Տետաուի, լույս աշխարհ է գալիս
1843 թ. հունիսի 9-ին Պրագայում: Չնայած
ծագմանը դքսուհի լինելով, Բերթան երբեք
ընդունելություն չի գտնում «բարձրաշխարհիկ հասարակության»
շրջանում: Նրա մայրը՝ Սոֆիան, ծնունդով
քաղբենիական դասից էր և նրա ամուսնու մահից հետո
վերջինիս ընտանիքը լքում է նրան:

Դաստիարակչուհի Չուտներների տանը

Երեք նշանադրություն, բայց ոչ մի ամուսնություն.
Բարոն գուստավ ֆոն Հայնե-Գելդերն,
մի անգլիացի ֆինանսիստ (անունն անհայտ է)
Արքայազն Ադոլֆ ցու Չայն-Վիտգենշթայն-Հոհենշթայն

Գուստավ ֆոն Հայնե-Գելդերն. Բերթան խզում է նշանադրությունը 34-ամյա
միլիոնատիրոջ հետ:

Հարմանսդորֆ դղյակն այսօր

Չուտներ ընտանիքի սպասավորակազմը:
Որպես դաստիարակչուհի՝ ծնունդով
դքսուհին նրանց կարգին է դասվում:

Ներքին Ավստրիայի Հարմանսդորֆ
դղյակում Բերթան երջանիկ ժամանակ է
անցկացնում Չուտներների ընտանիքի շրջապատում:

Բերտան ընդդիմանում է վաճառվել մեծահարուստ մեկին:
Որպես բարոն Չուտների դուստրերի դաստիարակչուհի՝
ինքն է արժանապատվորեն վաստակում իր դրամը:
Նա սիրահարվում է բարոնի որդիներից մեկին՝
իր ապագա ամուսին Արթուր ֆոն Չուտներին:

Ալֆրեդ Նոբել

Փարիզյան տեսարան:

Ալֆրեդ Նոբելը, մենակյաց և մեկամտ դոկտոր մարդ,
սիրահարվում է շատ կարդացած և բազմալեզու
Բերթային:

Նոբելին գրած Ձուտների
փոստային բացիկը

Նոբելի
քիմիական
փորձասենյակը

Նոբելի փարիզյան առանձնատունը
ավրնյու Մալաքովի վրա, Բերթայի
կացավայրն ու աշխատավայրը:

«Ես կուզենայի ստեղծել սարսափազդու,
զանգվածային ոչնչացման մի նյութ կամ մեքենա,
որպեսզի դրանով պատերազմներն անհնարին դառնան:»
(Ա.Նոբել)

Ալֆրեդ Նոբելը դինամիտի հայտնագործությամբ
միլիոններ դիզեց: Տարիներ շարունակ շրջագայելուց
հետո նա հաստատվում է Փարիզում և լրագրային
գովազդի խողովակներով քարտուղարուհի է փնտրում:
Բերթայի դիմումն ընդունվում է անմիջապես:

Կովկասյան տարիները

Գունագեղ նկարների հավաքածուում ներկայացված է
կովկասյան «էքզոտիկ» կյանքը:

Մենգրելիայի իշխանուհի Եկատերինան՝
Չուտներների բարերարուհին

Թիֆլիս, արխիվային լուսանկար՝ Բերթա ֆոն Չուտների արխիվից

Դրամ աշխատելու նպատակով
Բերթան շարունակելի վեպեր է
գրում ավստրիական լրագրերի համար
և դրանով աստիճանաբար ճանաչում
է ձեռք բերում

Արթուր ֆոն Չուտներ, յոթը
տարով իրենից կրտսեր ամուսինը:
Դիմանկարը վերաբերում է ավելի
ուշ ժամանակի:

Բերթա ֆոն Չուտները՝ գիրուկ և կարճատես,
ամուսնու կողմից Վրաստանում արված ծաղրանկարից:

Արթուր Չուտների հանդեպ սիրուց դրդված՝
Բերթան 1876-ին թողնում է Փարիզը: Գաղտնի
ամուսնական ծեսից հետո՝ զույգը հաստատվում
է Վրաստանում: Դրամային վիճակը ծանր է.
լեզուների և երաժշտության դասավանդմամբ
Բերթան հոգում է ընտանիքի կարիքները:

Վերադարձ Եվրոպա - Փարիզ

Փարիզյան տեսարան

Հռչակավոր ֆրանսիացի
գրող Էմիլ Չոլա, Չուտների
թղթակից-բարեկամը

«Մեքենաների դարաշրջանը» -
1888-ին լույս տեսած իր այս գրքում
Չուտներն առաջին անգամ հիշատակում
է միջազգային խաղաղության շարժումը

Բանաստեղծ Ալֆոնս Դոդեի
տանը Չուտները կապ է հաստատում
խաղաղության շարժման հետ:

Կովկասյան տարիներից հետո գույգը
վերադառնում է Եվրոպա: Փարիզում Բերթա
ֆոն Չուտները առաջին անգամ տեղեկանում է
կազմակերպված խաղաղության շարժման մասին:
Այդ պահից նա գտնում է իր կյանքի կոչումը:

Վա՛յր դրեք զենքը

Ավստրիական խաղաղության
ընկերության ամսաթերթը

Պացիֆիստ Լև Տոլստոյը ևս
տպավորված է Ջուտների գրքից:

Հակապատերազմական վեպը աշխարհով մեկ դասվում է
19-րդ դարի ամենահամբավված գրքերի շարքը:

Ջուտներին առատաձեռն օժանդակող
Ալֆրեդ Նոբելի՝ ավստրիական
խաղաղության ընկերության
անդամատոմսը

Այլևս մեծահամբավ
Ջուտները՝ թեմա է դառնում
ծաղրանկարիչների համար

«Վա՛յր դրեք զենքը»՝ 1899 թ. – կրքոտությամբ
և պատերազմական սարսափների իրապաշտ
նկարագրությունների պատճառով ընթերցողին
ցնցող գիրք: Ջուտները դառնում է պացիֆիստական
շարժման առաջնորդը: Գրեթե միայնակ 1891-ին
հիմնադրում է Ավստրիական խաղաղության
ընկերությունը:

Պայքար ընդդեմ հակասեմիտիզմի

«Հալածյալներին հալածանքներից պաշտպանելու
միայն մի ազնիվ ճանապարհ կա -
նրանց կողքին կանգնել»
(Բ.Ֆ.Ջուտներ)

Արթուր ֆոն Ջուտների «Դատողություններ Սիոնիստական շարժման
վերաբերյալ», Թեոդոր Հերցլի հրատարակած Die Welt լրագրում:

Թեոդոր Հերցլի «Հրեական
պետությունը», գաղափարապաշտ
մի գրություն՝ «Վայր դրեք զենք»-ի
հետևողությամբ

Թեոդոր Հերցլ, Սիոնիզմի
հիմնադիրը: Ջուտներների
բարեկամը, որը սակայն
կասկածամիտ է
«Ընդդիմադիրների
միության» հանդեպ:

Ժամանակի հակասեմիտական
ծաղրանկարներից

«Ընդդիմադիրների միության» նշանավոր անդամները.
Լուդվիգ Գանգհոֆեր, գրող
Հերման Նոթնագել, բժիշկ
Յոհան Շտրասուս որդի, երաժշտահան
Կարլ ֆոն Հազենաուեր, ճարտարապետ
Պետեր Ռոզենգրեյ, գրող
Ռիխարդ ֆոն Կրաֆտ-Էրբինգ, հոգեբույժ

Ջուտներները խստագույնս ընդդիմանում են
զնալով ավելի ու ավելի հզորացող հակասեմիտիզմին:
1891-ին Արթուրը հիմնում է «Հակասեմիտիզմից
պաշտպանության միությունը» և ստանում է Բերթայի
խանդավառ օժանդակությունը: Չույզը դրանով իսկ
թշնամիներ է ձեռք բերում ի դեմս ազգայնամուլների,
կղերականների և հակասեմիտականների:

Միջազգային կոնգրեսներ

Մասնակցելով ամենամյա Խաղաղության
կոնգրեսներին՝ Չուտներն ունենում է իր
առաջին մեծ հրապարակային ելույթները:

Չուտների կարևորագույն մարտընկերները. գերմանացի Ռուդոլֆ Վիրխով,
շվեյցարացի Էլի Դյուբոմըն և ֆրանսիացի Ֆրեդերիկ Պասսի

Ալֆրեդ Նոբելը կասկածամիտ է Չուտների հանդեպ.
«Իմ գործարանները գուցե ավելի շուտ վերջ կդնեն պատերազմին, քան նրա կոնգրեսները.
այն օրը, երբ երկու բանակներ մեկ ակնթարթում ի գորու լինեն իրար ոչնչացնելու, բոլոր
քաղաքակիրթ ազգերը կընկրկեն ու կցրեն իրենց բանակները:»

Այլևս որպես համաշխարհային հռչակի տեր կին՝
Բերթա ֆոն Չուտները կապեր է հաստատում բազմաթիվ
խաղաղության վեհաժողովների հետ և անխոնջ աշխատում է
հանուն միջազգային խաղաղության շարժման:

«Խաղաղության ցարը»

«Ժողովրդի կամք, պարզի՛ր առագաստներդ:
Խաղաղության նավն այժմ նավավար ունի ...
Ցամաք եմ տեսնում...»: Մի օրինակ «խաղաղության
ցարի» մասին Չուտների անըջային հույսից

«Խաղաղության հրեշտակը –
ֆիննական հեքիաթ» -
ծաղրանկարը ներկայացնում
է Նիկոլայ ցարի կոչերի և
Ֆինլանդիայում նրա բանակի
գործած դաժանությունների
միջև առկա անհարիրությունը:

Տիկին Չուտները. Արդ՝ դու սրում ես քո բայոնետը
և դու դա կոչում ես՝ ի սեր խաղաղությա՞ն:
Ռուսը. Երդվում եմ քեզ, քանի դեռ ես իմ բայոնետն
եմ սրում, ես խաղաղություն եմ ուզում:

«Ցարը և խաղաղության հրեշտակը»: Նիկոլայ Բ-ն
համբուրում է ծվատված խաղաղության հրեշտակին,
որը հենց նոր է բզկտվել ռուսական արջի կողմից:

1894-ին Չուտները մեծ հույսեր է կապում նոր
ցարի՝ Նիկոլայ Բ-ի հետ: Իսկապես էլ՝ ցարը
հանդես է գալիս «խաղաղության հռչակագրով»՝
զինաթափվելու և միջազգային խաղաղության
վեհաժողովի գումարման պահանջով: Սակայն,
նրա վարած քաղաքականությունը Ֆինլանդիայում
և Մանջուրիայում մատնում է նրա ստահող կեցվածքը:
Չուտները երկար ժամանակ պաշտպանում է նրան և
շատերն իր մարտակիցներից այդ հողի վրա գժտվում են նրա հետ:

Հաագայի խաղաղության վեհաժողովները

Ջուտները որպես Թեոդոր Հերցլի «Die Welt» օրաթերթի թղթակից ուղևորվում է Հաագա և աշխատում է նաև ի շահ Սիոնիզմի:

«Դեպի Հաագա...»
Ճամայրուկներս կապված եմ,
վաղը ես ուղևորվում եմ դեպի
«խաղաղության ծննդավայրը»...

«Եվրոպա, շտապիր ինքդ քեզ հետ եղբայրանալու, շտապիր
վերջ դնելու քո ազգերի միջև մղվող պատերազմին, այլապես
հաջորդ միջադեպը քո կործանումն է լինելու»:

Խաղաղության հրեշտակը
ծաղրում է Ջուտներին՝
լեզու ցույց տալով:

«Օ Բերթա, ինչ անուշ է բուրում» -
եվրոպական պետությունների ղեկավարները՝ որպես
խաղաղության ծխամորճը ճաշակող հնդկացիներ:

Ցարի կոչով 1899-ին Հաագայում գումարվում
է խաղաղության առաջին վեհաժողովը:
Մասնակիցները, սակայն, պացիֆիստները
չեն, այլ դիվանագետներ, պետական այրեր
և զինվորականներ: Չինաթափման և
պատերազմական իրավունքի շուրջ քննարկումները
անարդյունք վախճան են ունենում:

Ալբերտ, իշխան Մոնակոյի

Մոնակոյի պալատը: Չուտների փոստային բացիկը
Վիեննայի իր տանտիրուհուն՝ իր ձեռագիր նշումով.
«Սա իմ բնակարանն է»:

Ալբերտ, իշխան Մոնակոյի

Մոնտե Կառլոյում Խաղաղության
ինստիտուտի հիմնումից հետո արված
խմբակային լուսանկար. ձախից՝ Չուտները,
նրա կողքին՝ իշխան Ալբերտն է

Մոնտե Կառլոյի նշանավոր Կազինոն

Չուտների ազդեցությամբ՝ Մոնակոյի իշխան
Ալբերտը ևս ներգրավվում է եվրոպական
խաղաղության շարժման մեջ: Բերթային
սակայն չի հաջողվում այդ նպատակով
նրանից գումարներ ստանալ:

Ամերիկա

Ուղևորությունների ընթացքում Ձուտները իր տանտիրուհի Կատի
Բուխինգերին է ուղարկում մեծ թվով փոստային բացիկներ:

«Սա Սան Ֆրանցիսկոյի նավահանգիստն է,
ուր ես այսօր բարեհաջող հասա»:

Ձուտները ամերիկացի կին
իրավապաշտպանների հետ,
նրա կողքին նստած է
լրագրության արքա Վիլյամ
Ռ. Հիրստի կինը

Ամերիկյան խոշոր արդյունաբերող
Էնդրյու Կարնեգին միլիոնների հասնող
միջոցներով աջակցում է խաղաղության շարժմանը:

Չաուտաուկայի ամֆիթատրոն, Նյու Յորք: Բազմության առջև Ձուտները
ատենախոսում է անգլերեն լեզվով:

Ամենամեծ հաջողությունները Ձուտներն ունենում է
ԱՄՆ-ում, ուր նա նաև որպես ֆեմինիստական
շարժման կուռք է ընդունվում: Չնայած առաջացած
տարիքին, խաղաղության շարժման համար
բարերարներ գտնելու նպատակով 1904 և 1912 թթ.
նա ուղևորություններ է ձեռնարկում Ամերիկա:

Նորելյան մրցանակը

Ձուտները Վիեննայի իր աշխատասենյակում: Խորքում՝
արմավենու ճյուղերով պսակված, 1902-ին մահացած Արթուրի դիմանկարը

Նրբագեղ այրին՝ դասախոսելիս

Նոբելյան մրցանակի արժանացման լուրը
հասնում է Ձուտներին 1905-ին՝ Գերմանիայում
դասախոսություններով հանդես գալու օրերին:

Ծաղրանկարիչների շրջանում Ձուտները
վաղուց կնքվել է «Խաղաղության-Բերթա»
ծաղրանունով.
«Ինձ ծաղրելը
բնության ամոթն է»:

Ձուտների
մերձակից գործընկեր,
հրապարակախոս
Ալֆրեդ Հերման Ֆրիդը.
1911 թ. նա ևս արժանացավ
Խաղաղության Նոբելյան
մրցանակի

Ձուտների ձոնը Ֆրիդին. «Նրան, իմ նախկին աշակերտին,
ավելի ուշ՝ իմ օգնականին, և վերջապես իմ ապավենին է
(Ա.Հ.Ֆրիդ) պատկանում այս հատորը:

Առանց Ձուտների չէր լինի Խաղաղության Նոբելյան
մրցանակը, դա ինքն էլ լավ էր հասկանում: Այն, որ
առաջին տարիների մրցանակաբաշխությունները
շրջանցում էին իրեն, դրանից նա շատ էր հուսահատվում:
Նա մշտապես դրամի կարիքն ուներ. խաղաղության
շարժման համար և անձնապես իր համար:

Մեծ պատերազմից առաջ

«Մարդիկ չեն հասկանում, թե ինչ է կատարվում... Ինչու՞ ոչինչ չեք ձեռնարկում, երիտասարդներ: Սա առաջին հերթին ձեզ է վերաբերվում: Պաշտպանվեք, միացեք իրար հետ: Մի՛ թողեք ողջը մի քանի ծեր կանանց ուսին, որոնց ոչ ոք չի լսում»:
(Չուտները Շտեֆան Յվայզին)

Մինչև վերջ Չուտները պայքարում էր պատերազմի սպառնալիքը կանխելու համար:

Ավստրո-Հունգարիան և Գերմանական Կայսրությունը.
«Կռվի դաշտում եղբայրությունն այս մեր թանկ մեզ տալիս է ուժ, քաջություն, հաղթանակ»:

Բալկանները
խեղդվում են արյան մեջ.
1-ին բալկանյան պատերազմը՝ 1911,
2-րդ բալկանյան պատերազմը՝ 1913,
3-րդ բալկանյան պատերազմը՝ 1914,
որպես համաշխարհային
պատերազմի դրոշիչ:

Ճակատագրական «նիբելունգյան հավատարմությանը» միավորված.
ավստրիական կայսր Ֆրանց Յոզեֆը (աջից) և
գերմանական կայսր Վիլհելմ Բ-ն:

Բոլոր պետությունները գլխապատառ զինվում են:
Չուտները, հուսահատ, զգուշացնում է մեծ
պատերազմի մասին և ծաղրի է արժանանում:
Իր մահից մեկ շաբաթ անց, 1914 թ. հունիսի 21-ին,
Սարաևոյում սպանվում է Ավստրիայի
թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդը, մեկ ամիս անց
Ավստրո-Հունգարիան պատերազմ է հայտարարում
Սերբիային. սկսվում է առաջին աշխարհամարտը ...

Չուտները և Նորելյան մրցանակը

2004 Վանգարի Մասթհայ
2003 Շիրին Էբադի
2002 Ջիմմի Բարսեր
2001 ՄԱԿ-ը և նրա գլխավոր
քարտուղար Բոֆի Աննանը
2000 Կիմ դե Յունգ
1999 Բժիշկներ առանց սահմանի
1998 Ջոն Հյուն և Դևիդ Թրիմբլ
1997 Ականառուների դեմ պայքարի
միջազգային քարոզարշավը և Ջոդի Վիլյամսը
1996 Կարլոս Ֆելիպե Բոսխե Բելո
և Խոսե Ռամոս Հորտա
1995 Ջոզեֆ Ռոտբլեթ և Գիտություն ու աշխարհի
հարցերով Փուգուոշի համաժողովները
1994 Յասիր Արաֆատ, Շիմոն Պերես և Իցհակ Ռաբին
1993 Նելսոն Մանդելա և Ֆրեդերիկ Ուիլլեմ դե Զլերկ
1992 Ռիգոբերտա Մենչու Թում
1991 Աունգ Սան Սուու Կյի
1990 Միխայիլ Գորբաչով
1989 Թենզին Գյաստո, 14-րդ Դալայ Լամա
1988 ՄԱԿ-ի խաղաղապահ զորքեր
1987 Օսկար Արիաս Սանչես
1986 Էլի Վիգել
1985 Համաշխարհային ֆիզիկոսները հանուն
միջուկային պատերազմի կանխարգելման
1984 Դեսմոնդ Մալիլո Թուրո
1983 Լեյա Վալեսա
1982 Ալվա Միշոլայ
1981 UNHCR
1980 Ադուֆո Պերես Էսքիվել
1979 Մայր Թերեզա
1978 Անվար աւ-Մադաթ և Մենախեմ Բեգին
1977 Amnesty International
1976 Բեթթի Վիլիամս և Մեյրիդ Բորրիգեն
1975 Անդրեյ Սախարով
1974 Սին Մըք Բրայդ և Էյսակու Սատո
1973 Հենրի Բիսինջեր և Լե դյուք Թո
(հրաժարվել է մրցանակն ընդունելուց)

1972 Մրցանակաբաշխություն չի եղել
1971 Վիլլի Բրանդտ
1970 Նորման Բորլաուզ
1969 International Labour Organisation
1968 Ռընե Կասսեն
1967 Մրցանակաբաշխություն չի եղել
1966 Մրցանակաբաշխություն չի եղել
1965 UNICEF
1964 Մարտին Լութեր Քինգ
1963 Կարմիր Խաչի միջազգային կոմիտե և
«Կարմիր Խաչի ընկերությունների լիգա»
1962 Լինուս Փոլինգ
1961 Դազ Հյալմար Ազնե Կարլ Համմարսկյոլդ
1960 Ալբերտ Ջոն Լուտուլի
1959 Ֆիլիպ Նոել-Բեյքըր
1958 Ժորժ Անրի Պիո
1957 Լեսթըր Բուլու Փիրսոն
1956 Մրցանակաբաշխություն չի եղել
1955 Մրցանակաբաշխություն չի եղել
1954 UNHCR
1953 Ջորջ Քեթլիթ Մարշալ
1952 Ալբերտ Շվայցլեր
1951 Լեոն Ժոն

- 1950 Ռալֆ Բանչ
- 1949 Լորդ Ջոն Բոյդ Օրր ֆոն Բրեյսին
- 1948 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1947 “The Friends Service Council” և
“The American Friends Service Committee”
- 1946 Էմիլի Գրին Բուչ և Ջոն Ռեյլի Մոքս
- 1945 Կորդելլ Հուլլ
- 1944 Կարմիր Խաչի միջազգային կոմիտե
- 1943 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1942 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1941 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1940 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1939 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1938 Նանսենը փախստականների համար
միջազգային գրասենյակ

- 1937 Մեսիլ օֆ Չելվուդ
- 1936 Կարլոս Սաավեդրա Լամաս
- 1935 Կարլ ֆոն Օսպիեցկի
- 1934 Արթուր Հենդերսոն
- 1933 Սըր Նորման Էնջելլ
- 1932 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1931 Ջեյմ Էդամս և Նիկոլաս Մարբեյ Բաթլըր
- 1930 Լարս Օլոֆ Ջոնսոն Սյոդերբլոմ
- 1929 Ֆրենկ Բիլլիգս Քելլոգ
- 1928 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1927 Ֆերդինանդ Բյուխսոն և Լուդվիգ Քուիդդե
- 1926 Արիստիդ Բրիան և Գյուստավ Շտրեգենմանն
- 1925 Օսփին Չեմբերլեն և Չարլզ Գեյթս Դոուգ
- 1924 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1923 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1922 Ֆրիտյոֆ Նանսեն
- 1921 Կարլ Հյալմարթրանտինգ և Քրիստիան Լու Լանժ
- 1920 Լեոն Վիկտոր Օգյուստ Բուրժուա
- 1919 Թոմաս Վուդրոլ Վիլսոն
- 1918 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1917 Կարմիր Խաչի միջազգային կոմիտե
- 1916 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1915 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1914 Մրցանակաբաշխություն չի եղել
- 1913 Անրի լա Ֆոնտեն
- 1912 Էլյու Ռոթ
- 1911 Թոբիաս Միխաել Կարել Ասսեր և
Ալֆրեդ Հերմանն Ֆրիդ
- 1910 Խաղաղության միջազգային մշտական գրասենյակ
- 1909 Օգյուստ Մարի Ֆրանսուա Բեմեր և
Պոլ Անրիներժամենն Բալլուե դ’Էստումեյ
- 1908 Կլաս Պոնտուս Անդլոսոն և Ֆրեդրիկ Բայեր
- 1907 Էռնեստո Թեոդորո Մոնետա և Լուի Ռընո
- 1906 Թեոդոր Ռուզվելտ
- 1905 Բերթա ֆոն Ջուտներ
- 1904 Միջազգային իրավունքի ինստիտուտ
- 1903 Սըր Վիլյամ Ռենոլդ Քրեմբըր
- 1902 Էլի Գյուբոնըն և Շարլ Ալբեր Գոբա
- 1901 Ժան Անրի Գյունան և Ֆրեդրիկ Պասսի

Քսան տարի տևեց Բերթա ֆոն Ջուտների և Ալֆրեդ Նորբեյի միջև սերտ բարեկամությունը: Ջուտները մշտապես փորձում էր միլիոնատիրոջը համոզել Խաղաղության շարժմանն օժանդակող մեծ

դրամագլխով հաստատություն հիմնելու համար:
1996-ին Նորելի մահվանից մեկ շաբաթ առաջ Չուտները
գրում է նրան. «Նաև խնդրում եմ Ձեզ՝ պարզված ձեռքերով,
մի՛ հրաժարվեք երբեք Ձեր օժանդակությունից, երբեք, ոչ
անգամ գերեզմանից անդին, որ մեզ բոլորիս է սպասում»:
Նորելի կտակի մասին այն ժամանակ նա դեռ չգիտեր: